«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 4

30.11.2022թ.

1. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում 2021 թ. հոկտեմբերի 21-ին հայտարարված Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի մրցույթի կազմակերպման հարցի վերաբերյալ.

1.1. Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների հիման վրա Սմբատ Հարութի Դավեյանն ընտրվել է ՀԱԱՀ Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

2. Դոցենտի գիտական կոչում շնորհելու մրցույթի կազմակերպման հարցի վերաբերյալ.

- Փառանձեմ Գարեգինի Մինասյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Բ.00.00 - «Քիմիա» մասնագիտությամբ,
- Լուսինե Գագիկի Մաթևոսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Զ.01.00 - «Ագրոնոմիա» մասնագիտությամբ,
- Մարիաննա Էդուարդի Հովհաննիսյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ը.00.00 - «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ,
- Արամ Պարգևի Տոնապետյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Ե.20.00 - «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ,
- Նանե Արմենի Խուդավերդյանին շնորհվել է դոցենտի գիտական կոչում Զ.01.00 - «Ագրոնոմիա» մասնագիտությամբ::

3. Համալսարանի աշխատակազմի վերապատրաստումների և կարճաժամկետ ծրագրերի իրականացման, հնարավորությունների և խնդիրների վերաբերյալ.

3.1. Ընդունել ի գիտություն:

3.2. Հանձնարարել կարիերայի զարգացման, շարունակական կրթության բաժնի վարիչ Լ. Վարդանյանին.

- ամփոփել համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացվող բոլոր դասընթացների ամբողջական տվյալները,
- գնահատել համալսարանի դասախոսական անձնակազմի վերապատրաստումների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների կիրառությունը ուսումնական գործընթացում:

3.3. Հանձնարարել կարիերայի զարգացման, շարունակական կրթության բաժնի վարիչ Լ. Վարդանյանին և լրատվության բաժնի վարիչ Սոս Ավետիսյանին՝ ապահովել համալսարանի կողմից իրականացվող դասընթացների, կարճաժամկետ ծրագրերի մասնակիցների հաջողության պատմությունների հրապարակայնացում:

3.4. Հանձնարարել կարիերայի զարգացման, շարունակական կրթության բաժնի վարիչ Լ. Վարդանյանին և ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին.

- ստեղծել շարունակական կրթության հարթակ և ներկայացնել ագրարային համալսարանի կողմից կազմակերպվող դասընթացները,

- բացահայտել ՏՏ կենտրոնի աշխատակիցների կարիքները և կազմակերպել վերապատրաստումներ:

3.5. Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Լ. Զաքարյանին, ստորաբաժանումների ղեկավարներին, մասնագիտական կրթական ծրագրեր կազմող թիմերի հետ համագործակցելով, ներառական կրթությունն ապահովող դրույթներն ընդգրկել ՄԿԾ-ում:

4. ՀԱԱՀ ռազմավարական գործողությունների պլանի և ինստիտուցիոնալ հավատարմագրման համատեքստում հաստատված «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի» կատարողականի, գործողությունների պլան-ժամանակացույցի վերաբերյալ.

4.1. Ընդունել ի գիտություն:

4.2. ՈԳԱԿ կազմված հաշվետվությունը տրամադրել համալսարանի բոլոր ստորաբաժանումներին:

4.3. Օրինակելի ՄԿԾ մշակելու համար, «Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների» ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու Աննա Լևոնի Դաշտոյանին հայտնել շնորհակալություն և պարգևատրել 100 հազար դրամով, իսկ օրինակելի առարկայական ծրագիր մշակելու համար՝ «Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության» ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու Արման Համլետի Հարությունյանին հայտնել շնորհակալություն և պարգևատրել 30 հազար դրամով:

5. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ասպիրանտ Գևորգ Սամվելի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

5.1. Գևորգ Սամվելի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Խաղողի այգիների միջվազային և միջշարային տարածքների պլանետարային հաղորդակային մեխանիզմով հողամշակ ֆրեզի մշակում, պարամետրերի հիմնավորում և ավտոմատ կառավարում» անվանումով՝ Ե.20.01 - «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ:

5.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Ա.Պ. Թարվերդյանին:

6. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի ասպիրանտ Գևորգ Աշոտի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

6.1. Գևորգ Աշոտի Կարապետյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Լեռնային պայմանների համար հողի մշակության համակցված մեքենայի կատարելագործում և ռոտորային բանվորական օրգանի պարամետրերի հիմնավորում» անվանումով՝ Ե.20.01 - «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ:

6.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մյասնիկի Եսոյանին:

7. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ասպիրանտ Ամալյա Խաչիկի Իսկանդարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

7.1. Ամալյա Խաչիկի Իսկանդարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Հայկական քիչ տարածված խաղողի սորտերի և դրանց արդյունաբերական ներուժի ուսումնասիրությունը» անվանումով՝ Ե.18.01 - «Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ:

7.2. Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար հաստատել տեխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կարեն Նորիկի Կազումյանին:

8. ՀՀ գիտության կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում փորձարարական մշակումների նախագծերի հայտերի ընտրության մրցույթ»-ին մասնակցության համար «Տավարի մթերատվության և սնվածության բարելավման համար էկոլոգիապես մաքուր, բնական կերային հավելուկի պատրաստման և օգտագործման տեխնոլոգիայի մշակում և ներդրում» անվանումով հայտի երաշխավորման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ Գիտական խորհուրդը միաձայն որոշեց երաշխավորել «Տավարի մթերատվության և սնվածության բարելավման համար էկոլոգիապես մաքուր, բնական կերային հավելուկի պատրաստման և օգտագործման տեխնոլոգիայի մշակում և ներդրում» անվանումով հայտի ներկայացումը ՀՀ գիտության կոմիտեի մրցույթին (թեմայի ղեկավար՝ գ.գ.թ., դոցենտ Ժիրայր Չիթչյան):

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ